

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի


2015 թվական, դեկտեմբերի 22, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Սերգեյ Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության



նախագահ

Էդուարդ Կիրակոսյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ գործադիր տնօրեն

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Բագրատ Ղազինյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության պետ (ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Ս. Քրմոյանի փոխարեն)

Սրապիոն Առաքելյան Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Հ. Դանիելյանի փոխարեն)

Գայանե Արմաղանովա Առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Ժ. Թորոսյանի փոխարեն)

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

Գայանե Մանուկյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Կարինե Մադոյան Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարության աշխատակազմի
աշխատանքի և զբաղվածության
վարչության աշխատանքի բաժնի գլխավոր
մասնագետ

Քաջակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Համլետ Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Օրակարգի նախագծում ընդգրկված էր մեկ հարց.

1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների (2015-2018թթ.) ծրագրի նախագծի քննարկում և հաստատում:

Նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին և Հանձնաժողովը հաստատեց նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցով:

1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների (2015-2018թթ.) ծրագրի նախագծի քննարկում և հաստատում:

Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների (2015-2018թթ.) ծրագրի նախագիծը (այսուհետ՝ Ծրագրի նախագիծ) ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը: Նշվեց, որ Ծրագրի նախագիծը մշակվել է սոցիալական գործընկերների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից: Ծրագրի նախագծում նախանշված են այն հիմնական ուղղություններն ու միջոցառումները, որոնց շրջանակներում իրականացվելու է եռակողմ համագործակցությունը:

Նշվեց, որ Ծրագրի նախագծի մշակման համար ստեղծված աշխատանքային խմբում համաձայնություն ձեռք չի բերվել Ծրագրի նախագծում ընդգրկված երեք հարցերի շուրջ, որոնք առաջարկվեց քննարկել Հանձնաժողովում: Դրանք են.

1. Ծրագրի նախագծի 6-րդ «Ձեռնարկել միջոցներ արժանապատիվ աշխատանքի՝ միջազգայնորեն ընդունված չափանիշների ապահովման համար» կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 2-րդ կետի «գ» ենթակետը հետևյալ բովանդակությամբ.
«գ) աշխատաշուկա առաջին անգամ մուտք գործող անձանց համար նվազագույն աշխատավարձի ավելի ցածր շեմի սահմանման կամ որոշակի գործակիցների կիրառման օրենսդրական դրույթների ամրագրում.»:
2. Ծրագրի նախագծի 6-րդ «Ձեռնարկել միջոցներ արժանապատիվ աշխատանքի՝ միջազգայնորեն ընդունված չափանիշների ապահովման համար» կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 3-րդ կետը.
«3. Ձևավորել փոխհամաձայնեցված մոտեցումներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձի ինդեքսավորման մեխանիզմների վերաբերյալ»:
3. Ծրագրի նախագծի 14-րդ կետը.
«14. ՀՀ-ի կողմից վավերացված ԱՄԿ-ի կոնվենցիաներով և հանձնարարականներով ու Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով պահանջվող հաշվետվությունների, զեկույցների և այլ անհրաժեշտ նյութերի նախապատրաստմանն աջակցություն»:

Մինչև վերոնշյալ կետերի քննարկումը, Հանձնաժողովի անդամ Շ. Մկրտչյանի կողմից ներկայացվեցին առաջարկություններ Ծրագրի նախագծի կառուցվածքի վերաբերյալ: Մասնավորապես նշվեց, որ իր կարծիքով անհրաժեշտ է, որպեսզի գործողությունների ծրագրում նախատեսված լինեն նաև ժամկետներ: Նշված տեսակետին էր նաև Բ. Խարատյանը: Բացի այդ Շ. Մկրտչյանի կարծիքով պետք է նշված լինեն նաև գործողությունների համար պատասխանատուները:

Նշված տեսակետների առնչությամբ Թ. Ավետիսյանի, Գ. Մակարյանի, Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ գործողությունների ծրագրում յուրաքանչյուր կետի համար ժամկետներ հստակեցնելը և ամրագրելը աննպատակահարմար է և ոչ իրատեսական, իսկ գործողությունների ծրագրի համար պատասխանատու են բոլոր երեք կողմերն էլ: Ուստի նպատակահարմար է Ծրագրի նախագիծը հաստատել ներկայացված կառուցվածքով՝ առանց կոնկրետ կետերի համար ժամկետներ և պատասխանատուներ սահմանելու:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից ևս նշվեց, որ ըստ էության կոնկրետ ժամկետներ և պատասխանատուներ նշելու անհրաժեշտություն չկա: Մինչույն է նախատեսված միջոցառումները պետք է իրականացվեն եռամյա կտրվածքով և դրա համար պատասխանատու են բոլոր կողմերը:

Վերոնշյալ տեսակետներն ընդունելի համարվեցին նիստի մասնակիցների կողմից:

Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի կողմից կարևորվեց սոցիալական գործընկերության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացումը նաև պետհիմնարկներում և ՏԻՄ-երում:

Ընդհանուր առմամբ սոցիալական գործընկերության մասին հասարակության իրազեկվածության հարցը կարևորվեց նաև Գ. Մակարյանի կողմից:

Բարձրացված հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ այդ իմաստով անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ձևաչափով են իրականացվելու իրազեկման աշխատանքները: Միաժամանակ նշվեց, որ այս իմաստով որոշակի աշխատանք կողմերի կողմից արդեն իսկ կատարվել է՝ «Սոցիալական անդրադարձ» ծրագրի եթերներից մեկը նվիրվել է սոցիալական գործընկերության համակարգի հարցերի լուսաբանմանը:

Սոցիալական գործընկերության մասին իրազեկման ձևաչափի համար որպես տարբերակ Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց, օրինակ, մարզերում աշխատանքի տոնավաճառների կազմակերպման ժամանակ ներկայացվի նաև, թե ինչ է սոցիալական գործընկերությունը: Որպես տարբերակ առաջարկվեց նաև մամուլի ասուլիսի կազմակերպումը:

Մարզերում աշխատանքի տոնավաճառների կազմակերպման ժամանակ սոցիալական գործընկերության մասին որոշակիորեն ներկայացնելու առաջարկությունը Ա. Ասատրյանի կողմից համարվեց ընդունելի և առաջարկվեց այս մասին իրազեկել նաև Զբաղվածության պետական գործակալությանը: Միաժամանակ Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց նաև, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների հաստատված ծրագիրը ներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ և առաջարկվի այն ուղարկել պետական կառավարման մարմիններին ի գիտություն՝ սոցիալական գործընկերության համակարգի մասին առավել լայնածավալ իրազեկվածություն ապահովելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահի վերոնշյալ առաջարկություններն ընդունվեցին Հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կողմից:

Ծրագրի նախագծում ներառված վերևում նշված, սակայն դեռևս չհամաձայնեցված կետերից 1-ինի կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ առաջարկությունը ներկայացվել է Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից, սակայն նշված ձևակերպմանը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան դեմ է:

Քննարկումների արդյունքում կողմերը պնդեցին իրենց տեսակետները:

Ներկայացված առաջարկության կապակցությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ ներկայացված առաջարկությունն իր էությամբ ունի նաև դրական կողմ զբաղվածության խթանման առումով, սակայն, կա նաև հարցի մյուս կողմը. մարդն աշխատում է և պետք է ստանա կենսաապահովման նվազագույն մակարդակն ապահովող վարձատրություն: Նշվեց, որ ընդհանուր առմամբ նվազագույն աշխատավարձը ինքնին բազմագործոն երևույթ է: Այս առումով կարծիք հայտնվեց, որ ըստ էության Ծրագրի նախագծի 6-րդ «Ձեռնարկել միջոցներ արժանապատիվ աշխատանքի՝ միջազգայնորեն ընդունված չափանիշների ապահովման համար» կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված գործողությունների իրականացումը ենթադրում են նաև «գ» ենթակետում նշված հարցին անդրադարձ: Ուստի, առաջարկվեց նախագծի 6-րդ կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 2-րդ կետի «գ» ենթակետը հանել:

Անդրադառնալով Ծրագրի նախագծի 6-րդ կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 3-րդ կետին՝ Հանձնաժողովի անդամ Բ. Խարատյանը նշեց, որ նշված կետը նույն բովանդակությամբ ամրագրված է նաև Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում: Ուստի անհրաժեշտ է այդ կետը թողնել գործողությունների ծրագրում:

Նշված տեսակետներն ընդունելի համարվեցին Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից և առաջարկվեց այդ կետի միջոցառումը թողնել Ծրագրի նախագծում:

Ծրագրի նախագծում 3-րդ չհամաձայնեցված կետի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ մինչև նույն է սոցիալական գործընկերները մասնակցում են ՀՀ-ի կողմից վավերացված ԱՄԿ-ի կոնվենցիաներով և հանձնարարականներով ու Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով պահանջվող հաշվետվությունների, զեկույցների և այլ անհրաժեշտ նյութերի նախապատրաստման աշխատանքներին: Ուստի, այս իմաստով, Ծրագրի նախագծից նշված 14-րդ կետի միջոցառումը հանելը նպատակահարմար չէ:

Նշված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից:

Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց Ծրագրի նախագծի 2-րդ կետի միջոցառմանը վերաբերող գործողությունների 1-ին կետում «հանձնաժողովներ» բառից հետո լրացնել «կոմիտեներ» բառը:

Վերոնշյալ քննարկումների արդյունքում Հանձնաժողովը որոշեց.

1.1. Քննարկված և համաձայնեցված առաջարկություններին համապատասխան՝ հաստատել Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների (2015-2018թթ.) ծրագիրը (կցվում է արձանագրությանը).

1.2. Մարզերում աշխատանքի տրամադրանքների կազմակերպման ժամանակ անդրադառնալ նաև սոցիալական գործընկերության մասին իրազեկման հարցերին.

1.3. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների հաստատված ծրագիրը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պետական կառավարման մարմիններին ի գիտություն ուղարկելու համար:

Նիստի վերջում Գ. Մակարյանի կողմից ներկայացվեց տեղեկատվություն այն մասին, որ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը սկսում է նոր «ՄԿՈՒ գործընկերության 2016-2018թթ. ծրագիր» Հարավ-Կովկասյան տարածաշրջանի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) գործատուների միությունների հետ՝ Գերմանիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են քննարկումներ, որին մասնակցության կիրավիրվեն նաև սոցիալական գործընկերները: Ծրագրի շրջանակներում կձևավորվեն երիտասարդության զբաղվածության խթանման նոր հնարավորություններ:

Միաժամանակ, Գ. Մակարյանի կողմից կարևորվեցին աշխատուժի միգրացիային առնչվող խնդիրները և նշվեց, որ սոցիալական գործընկերները պետք է խորությամբ քննարկեն նաև այս խնդիրը, քանի որ իր կարծիքով նշված խնդիրը որևէ գերատեսչության կողմից համալիր կերպով չի կարգավորվում:

Գ. Մակարյանի կողմից բարձրացված վերոնշյալ հարցի առնչությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ այնպես չէ, որ խնդիրն առհասարակ դուրս է մնացել պետական մարմինների կարգավորման դաշտից: Այս իմաստով նշվեց, որ օտարերկրացիների աշխատանքի կարգավորումներ տրվել են «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2015 թվականին ընդունված ՀՀ օրենքում: Միաժամանակ նշվեց, որ այս առնչությամբ մշակվել և ներկայումս շրջանառության է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է օտարերկրացիների աշխատանքին առնչվող հարցերի ամբողջական կարգավորում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ